

**ЭКОНОМИКА**

**Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրը ՀՀ-ում**

**Գասպարյան Գ. Գ.**

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, Հայաստան)  
Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի մագիստրանտ  
gasparyan.garry@mail.ru*

**Վճռորոշ բառեր՝** շրջակա միջավայր, ֆինանսավորում, պետական բյուջե, ՀՆԱ, բնապահպանական հարկեր, բնօգտագործման վճարներ, նպատակային օգտագործում, տնտեսական մեխանիզմ, էկոլոգիական ֆոնդ

**Проблема финансирования сферы охраны окружающей среды в Республике Армения**

*Гаспарян Г. Г.*

*Магистрант кафедры экономики природопользования  
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)  
gasparyan.garry@mail.ru*

**Аннотация.** В статье изучена проблема финансирования сферы охраны окружающей среды в Республике Армения. Представлен и оценен удельный вес финансирования сферы охраны окружающей среды в ВВП. Осуществлено сочетание экологических налогов, платежей за природопользование и финансирования сферы охраны окружающей среды, оценен эффективность целевого использования денежных средств, собранных посредством экологических налогов и платежей за природопользование. В результате зафиксировано, что существуют проблемы связанные с финансированием окружающей среды, и в качестве возможного пути решения проблем предложено сформировать систему национальных экологических фондов.

**Ключевые слова:** окружающая среда, финансирование, государственный бюджет, ВВП, экологические налоги, платежи за природопользование, целевое использование, экономический механизм, экологический фонд

**The problem of financing the sphere of environmental protection in the Republic of Armenia**

*Gasparyan G. G.*

*Master's student at the Chair of Environmental Economics  
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)  
gasparyan.garry@mail.ru*

**Abstract:** The article examines the problem of financing the sphere of environmental protection in the Republic of Armenia. The share of environmental protection financing in GDP is presented and estimated. A combination of environmental taxes, environmental fees and funding for environmental protection is implemented, the effectiveness of targeted use of funds collected through environmental taxes and environmental fees is assessed. As a result, it is noted that there are problems related to the financing of environmental protection, and as a possible way to solve the problems it is proposed to form a system of national environmental funds.

**Keywords:** environment, financing, state budget, GDP, environmental taxes, environmental fees, payments for natural resources, targeted use, economic mechanism, environmental fund

Ժամանակակից աշխարհում էկոլոգիական հիմնախնդիրների սրման պայմաններում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հետ կապված խնդիրները առավել արդիական են դառնում, ինչից անմասն չի մնում նաև Հայաստանի Հանրապետությունը:


Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորումը իրականացվում է հիմնականում պետական բյուջեի, երբեմն էլ միջազգային բնապահպանական, ֆինանսական և այլ կազմակերպությունների կողմից տրվող միջոցների հաշվին: Սակայն պետական բյուջեից ֆինանսավորման արդյունավետությունը բավականին ցածր է, քանի որ

բյուջետային ֆինանսական միջոցների սահմանափակության պայմաններում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորմանը բավարար նշանակություն չի տրվում, և այն, կարելի է ասել, իրականացվում է մնացորդային սկզբունքով:


Հարկ է նշել նաև, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական բյուջեից ֆինանսավորման կառուցակարգի պարագայում բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները ՀՀ-ում հիմնականում ծառայում են որպես պետական բյուջեի համալրման միջոց, ուստի և չի ապահովվում այդ հարկերի և վճարների միջոցով հավաքագրված դրամական

միջոցների նպատակային օգտագործումը: Հետևաբար, այս ամենն էլ հիմնավորում է, որ անարդյունավետ է գործում հանրապետությունում գործող շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմը:

Ստորև՝ գծապատկերում, ներկայացված է ՀՀ-ում 2015-2019թթ. շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2015-2019թթ.<sup>1</sup> (տոկոս)



Գծապատկեր 2. Ընդամենը, ընդամենը և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման ծավալները 2010-2019թթ. (մլրդ դրամ)

<sup>1</sup> Գծապատկերները կառուցվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքերի տվյալների հիման վրա [5; 6]:

Ինչպես երևում է գծապատկերից, վերջին տարիներին ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում տատանվել է 0.1%-ի շրջակայքում, մինչդեռ նշված ցուցանիշը Եվրոպական միությունում տատանվում է 2%-ի շրջակայքում [7], հետևաբար ստացվում է, որ ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման ծավալը համեմատած եվրոպական երկրների պակաս է մոտավորապես 20 անգամ, ինչը բավականին մտահոգիչ է:

Այժմ գծապատկերի միջոցով կատարենք 2010-2019թթ. բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների միջոցով հավաքագրված դրամական միջոցների և այդ ժամանակահատվածում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման ծավալի վերլուծություն (տե՛ս գծապատկեր 2):

Այսպիսով, գծապատկերից ակնհայտ է դառնում, որ առկա է մեծ տարբերություն բնապահպանական հարկերի, բնօգտագործման վճարների և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման ծավալների միջև, ինչը պայմանավորված է բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների միջոցով հավաքագրված դրամական միջոցների ոչ նպատակային օգտագործմամբ: Ըստ գծապատկերի տվյալների՝ դիտարկվող ժամանակահատվածի ամենակարգում՝ 2010 թվականին, բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների ընդհանուր ծավալը կազմել է 9.1 միլիարդ դրամ, իսկ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորումը՝ 4.9 միլիարդ դրամ, հետևաբար բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործման ցուցանիշը կազմել է 53.8%: Իսկ դիտարկվող ժամանակահատվածի ամենավերջում՝ 2019 թվականին, բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները միասին կազմել են 63.7 միլիարդ դրամ, իսկ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորումը կազմել է ընդամենը 5.6 միլիարդ դրամ, այս դեպքում բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործման ցուցանիշը կազմել է 8.8%, ինչը բավականին ցածր է և փաստում է վերոնշյալ խնդրի հրատապության մասին: Ստացվում է, որ թեև 2010-2019թթ. ընթացքում բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները միասին վերցրած գրեթե անընդհատ ունեցել են բարձր աճի միտում, ինչի արդյունքում էլ 2019 թվականին բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների ընդհանուր ծավալը 2010 թվականի համեմատ ավելացել է 54.6 միլիարդ դրամով կամ շուրջ 7 անգամ, իսկ միևնույն ժամանակահատվածում շրջակա միջավայրի

պահպանության ոլորտի ֆինանսավորման դեպքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել (բացարձակ աճը կազմել է 0.7 միլիարդ դրամ), ինչն էլ փաստում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական բյուջեից ֆինանսավորման կառուցակարգի պարագայում բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործման անարդյունավետության մասին:

Թեև ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդրի լուծման նպատակով որոշակի քայլեր են կատարվել, մասնավորապես, 2001 թվականին ընդունվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ յուրաքանչյուր տարի ՀՀ-ում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների, ինչպես նաև շրջակա միջավայրի բնագավառի լիազոր մարմնի կողմից սահմանվող այլ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից մասհանումներ են կատարվում և առանձին տողով արտացոլվում այն համայնքի բյուջեում, որի տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն [2], 2011 թվականին համապատասխան լրացում է կատարվել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում, որով ամրագրվել է, որ բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել, քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը [1], սակայն, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրը դեռևս լուծված չէ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նշված հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակներից է Էկոլոգիական ֆոնդերի ստեղծումը, որոնք լայն տարածում են ստացել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում [3, էջ 10] : Էկոլոգիական ֆոնդերի ստեղծման անհրաժեշտությունը ծագել է 20-րդ դարի 70-80թթ., ինչը կապված էր բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման համար դրամական միջոցների հայտնաբերման, հավաքագրման և բաշխման հիմնախնդրի լուծման հետ [4, էջ 199]: Նշված ֆոնդերի ձևավորման գլխավոր նպատակն է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման պետական բյուջեից անկախ կենտրոնացված աղբյուրի ստեղծումը:

Էկոլոգիական ֆոնդերի ձևավորման հիմնական աղբյուր են հանդիսանում շրջակա միջավայրի աղտոտման դիմաց վճարները, հարկերը, Էկոլոգիական օրենսդրության խախտման համար տուգանքները, կամավոր մուծումները քաղաքացիների և կազմակերպությունների կողմից, ինչպես նաև որոշ դեպքերում բնական ռեսուրսների օգտագործման վճարները:

Էկոլոգիական ֆոնդերի միջոցները բացառապես նպատակաուղղված են շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների իրականացման, այդ թվում հասարակության առողջության պահպանման և վերականգնման, բնական ռեսուրսների վերարտադրության, գիտական հետազոտությունների իրականացման, Էկոլոգիայի մաքուր տեխնոլոգիաների ներդրման, մաքրման կայանների կառուցման, Էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման, ինչպես նաև Էկոլոգիական այլ նպատակների իրականացման ֆինանսավորմանը:

Այսպիսով, ամփոփելով ուսումնասիրությունները և հաշվի առնելով հանրապետությունում առկա Էկոլոգիական խնդիրները՝ կարելի է ասել որ ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման հիմնախնդիրը բավականին հրատապ է, ուստի ժամանակն է քայլեր կատարել վերոնշյալ հիմնախնդիրն լուծումներ տալու ուղղությամբ, դե իսկ հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ֆինանսավորման միջազգային փորձը՝ այդպիսին կարող են հանդիսանալ

ազգային Էկոլոգիական ֆոնդերի համակարգի ձևավորումն ու զարգացումը:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 1997թ.
2. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք, 2001թ.
3. **Գևորգյան Ս. Ա., Պետրոսյան Ռ. Ա., Գևորգյան Ա. Պ.**, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում», Երևան, Տնտեսագետ հրատարակչություն, 2014, 60 էջ
4. **Шимова О. С., Соколовский Н. К., Лопачук О. Н.**; под ред. д-ра экон. наук, проф. О. С. Шимовой /Экономика природопользования: учебник – Минск: БГЭУ, 2019 – 446 էջ
5. ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք <http://www.minfin.am>
6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն <https://www.armstat.am>
7. Eurostat Statistics Explained <https://ec.europa.eu/eurostat/statistics-explained>

*Տճանա/Հանձնվել է՝ 25.10.2020*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 01.11.2020*

*Принята/Ընդունվել է՝ 16.11.2020*